ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» մարտի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-11/17 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/504-17 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01569853) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.04.2016թ. թիվ 01/61-6515 գրության հիման վրա, 12.04.2016թ. թիվ 1/73-1/11937-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի

առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 12.12.2016թ. թիվ 01/04.1/4533-16 գրությամբ, Նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11937-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրվել է, որ «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակում «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն չի խախտել:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 17.01.2017թ. թիվ 03/73-3/504-17 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

<u>2. «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Ընկերությունը 02.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի 1-4 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին 30.03.2016թ. էլեկտրոնային եղանակով առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկի համար, ինչը կատարվել է Ընկերության կողմից, մինչդեռ Երևանի քաղաքապետարանը 11.04.2016թ. գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվել:

3. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 11.04.2016թ. թիվ 01/61-6515 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-11/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը՝</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/504-17 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 1-ին կետի համաձայն՝ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-4 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկի համար:

- 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել վերը նշված փաստաթղթերը, որոշել է մերժել Ընկերության հայտը:

5. ՍՑ-ԳԲԽ-11/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11937-16 և 17.01.2017թ. թիվ 03/73-3/504-17 գրությունները, Երևանի քաղաքապետարանի 11.04.2016թ. թիվ 01/61-6515 և 27.12.2016թ. թիվ 03/61-86417h գրությունները և կից փաստաթղթերը, «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 02.05.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունը, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԾՁԲ-16/20» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, Ընթացակարգի 1-4 չափաբաժինների մասով «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ճանաչելով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, 30.03.2016թ. էլեկտրոնային եղանակով առաջարկել է սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկի համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.04.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 1-ին կետի համաձայն՝ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-4 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկի համար:
- 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել վերը նշված փաստաթղթերը, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Ընկերությունը 02.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի 1-4 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որին 30.03.2016թ. էլեկտրոնային եղանակով առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկի համար, ինչը կատարվել է Ընկերության կողմից, մինչդեռ Երևանի քաղաքապետարանը 11.04.2016թ. գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից պահանջված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ ցածր գնային առաջարկի համար լրացուցիչ հիմնավորումները «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանին սահմանված ժամկետում ներկայացրած լինելու փաստը հաստատվում է նաև Ընկերության կողմից ներկայացված Երևանի

քաղաքապետարանի Ընկերությանը ուղղված 01.04.2016թ. էլեկտրոնային նամակի քաղվածքից:

Կարգի 47-րդ կետի՝

- 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:
- 3-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորություն,*** որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծարմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Նման պայմաններում հայտնում ենք, որ «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, քանի որ Ընկերությունը 31.03.2016թ. Պատվիրատուին է ներկայացրել Ընթացակարգի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև չհիմնավորված ցածր գնային առաջարկ հիմնավորումները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 17.01.2017թ. թիվ 03/73-3/504-17 գրությամբ ներկայացված «ՋԻ ԷՄ ՋԻ ՄԵԴԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01569853) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-11/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան